



Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 19_L

18 հունվարի 2022 թվական

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4 կետի 5-6-րդ ենթակետերով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը բաժանման եղանակով վերակազմակերպել «Անձնակազմի կառավարման բաժին» և «Իրավաբանական ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումների:
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Մինչհամալսարանական կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:
3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Դոկտորական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:
4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հանրային կապերի ծառայություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Հանրային կապերի և մարքեթինգի վարչություն» կառուցվածքային ստորաբաժանման:
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն» կառուցվածքային ստորաբաժանումը վերակազմավորել «Շարունակական կրթության կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման:
6. Ստեղծել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Ռազմավարական պլանավորման կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

7. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության շտաբ» կառուցվածքային ստորաբաժանումը:
8. Լուծարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ««Տավուշ» հետազոտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:
9. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին մի շարք կառուցվածքային ստորաբաժանումների վերակազմակերպումը և լուծարումն իրականացնել՝ համաձայն 18_Լ որոշման հավելված 2-ի ժամանակացույցի:
10. Հանձնարարել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորին կառուցվածքային ստորաբաժանումների լուծարման կազմակերպումը, աշխատակիցներին ծանուցումն իրականացնել՝ ՀՀ օրենսդրության և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան:
11. Սույն որոշման 1-5-րդ, 7-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում՝ համաձայն 18_Լ որոշման հավելված 2-ի ժամանակացույցի:
12. Սույն որոշման 6-րդ կետն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Ս. Պապիկյան

2022թ. հունվար «18»

Երևան